

7982



ՀԱՄԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«17» 07 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 132 - 24

Նախաձեռնող՝

«Արմ Կոնստրակց» ՍՊԸ  
ք. Երևան, Հյ. Պողոսյան փ. 5 շ. բն. 2

Գործունեությունը՝

Արաբկիր վարչական շրջանի Ս. Մալխասյան  
փողոց 6 հասցեում նախատեսվող բազմաբնակարան  
բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ  
ք. Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 132 - 24

« 17 » հուլիսի 2024թ.

**Արաբկիր վարչական շրջանի Ս.Մալխասյանց փողոց 6 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«Արմ Կոնստրակտ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան քաղաք

**Ներածական մաս.** Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի /այսուհետ՝ Հայտ/ համաձայն՝ նախատեսում է Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց փ. 6 հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի շենքեր/այսուհետ՝ Համալիր/:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ 110- Ն օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման N 29032024-01-0222 վկայականը /ծածկագիրը՝ 01-03-0204-0099/ և Երևան համայնքի կողմից տրամադրված 2024թ. ապրիլի 15-ի N01/50-0-199-24 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակա գծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.611332 հա:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեությունը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս արևելյան մասում, իրենից ներկայացնում է ազդեցության ենթարկված, կառուցապատումից ազատ տարածք: Նախատեսվող գործունեության տարածքից ամենամոտ շինությունը գտնվում է 23.5 մ հեռավորության վրա : Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է, Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, բնության հատուկ պահպանվող և պատմամշակութային հուշարձաններ չկան:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է Քանաքեռ-Արաբկիր հրաբխային սարավանդի սահմաններում, ծովի մակարդակից 1177.0-ից մինչև 1179.0 մետր բարձրությունների վրա:



Երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆակցիաներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տեղամասում մինչև 30.0 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել:

Նախատեսվող Համալիրի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող Ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ տեղամասում չեն դիտվում:

Բուսաաշխարհագրական տեսակետից՝ տարածքը պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին: Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է, վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսակների գերակշռությամբ:

Երևան քաղաքին բնորոշ է խիստ ցամաքային կլիման՝ շոգ, չոր ամառով և ցուրտ ձմեռով: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 40°C, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -30°C, օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 60%, տարեկան մթնոլորտային տեղումների միջին քանակը կազմում է 306 մմ:

Համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- Հողի ընդհանուր մակերես՝ 6113.3 մ<sup>2</sup>,
- Կառուցապատման մակերես՝ 2444.33 մ<sup>2</sup> (39.98%),
- Կանաչապատման մակերես՝ 2522,77 մ<sup>2</sup> (41.27%),
- Անջրանցիկ մակերես (սալվածք, ասֆալտ և այլն)՝ 1146.2 մ<sup>2</sup> (18,75%)
- Բնակարաններ քանակ՝ 496 հատ,
- Ավտոկայանատեղի քանակ՝ 352 հատ:

Համալիրը իրենից ներկայացնում է 3 մասնաշենքով 16 վերգետնյա բնակելի, 4 ստորգետնյա հարկերով և 5 բնակելի մուտքով կառույց: Ստորգետնյա առաջին հարկերում նախատեսվում են հասարակական տարածքներ: Շենքերի տանիքը հարթ է, կազմակերպված ջրահեռացմամբ: Յուրաքանչյուր բնակարանի համար նախատեսված է պատշգամբ: Համալիրի արտաքին պատերի համար նախատեսված են 6-10 սմ հաստության ջերմամեկուսիչ շերտ: -14.10 նիշում նախատեսված ավտոկայանատեղին անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց՝ 550-600 հոգու համար: Թաքստոցը ապահովված է լինելու օդափոխման համակարգերով և սանհանգույցներով՝ բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն Երևանի համայնքապետարանի կողմից հաստատված նախագծի:

Շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ էքսկավատոր, բուլդոզեր, ինքնաթափ, ավտոկոունկ, բեռնատար և այլն: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես՝ երկաթբետոն, երկաթբետոնե մետաղական կառուցվածքներ, ավազ, երեսպատման սալիկներ և այլն: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը



մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ գոյություն ունեցող ջրագծերից, աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Համալիրի կառուցման համար ներգրավվելու են 150 մարդ, 8 ինժեներատեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական ջուրը կբերվի ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով, Երևան քաղաքի ռոռգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շահագործման ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միանալու են քաղաքային՝ Արղության փողոցի գործող ջրային ցանցերին՝ համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը: Պարզարանում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի և մեքենաների անիվների լվացման համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շահագործման ընթացքում Համալիրի ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, շինարարական աղբ, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

> մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

> փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ հաճախականությամբ,

> օգտագործված տրանսպորտային յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

> աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,



> շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,

> հետևողականություն՝ կանաչապատման աշխատանքներն իրականացնող կազմակերպության կողմից տնկված ծառերի աճի և խնամքի նկատմամբ:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 242 000 (երկու հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացավել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

- Համալիրի կառուցման շինարարության մեկնարկը սկսել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում:


- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստորեն հետևել գործունեությանը առնչվող՝ շրջակա միջավայրի պահպանությանը, արտակարգ իրավիճակների, աշխատանքի և տեխնիկական անվտանգությանն ուղղված ՀՀ բոլոր իրավական ակտերի պահանջներին:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Համալիրի կառուցման վերջնական աշխատանքային նախանախագիծը համաձայնեցնել տեխնիկական հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ:

- Տարածքի կանաչապատումն իրականացնել համաձայն Երևանի համայնքապետարանի կողմից հաստատված նախագծի:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների



հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արաբկիր վարչական շրջանի Ս.Մալխասյանց փողոց 6 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան



«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
առաջատար մասնագետ



Ռուզան Մակինյան